ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՐԱՄԱՆ № 135/5 «24» 08 2020թ.

2020-2021 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՈՒՄ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 56-րդ կետի 10-րդ ենթակետով՝

հրամայում եմ

1. 2020-2021 թթ. ուսումնական տարում (2020 թ. սեպտեմբերի 1-ից) Երևանի պետական համալսարանում սահմանել ուսումնական գործընթացի կազմակերպման հետևյալ կարգը.

   1) 1.Բակալավրիատի առաջին կուրսեցիների համար ուսումնական գործընթացը սկսել սեպտեմբերի 1-3-ն ընկած ժամանակահատվածում՝ համաձայն ուսումնամեթոդական վարչության հետ նախապես համաձայնեցված ժամանակացույցի:
   2) Մյուս կուրսերի համար ուսումնական գործընթացը սկսել սեպտեմբերի 15-ից:
   3) Ուսումնական գործընթացը կազմակերպել առկա և հեռավար ձևերի համադրությամբ:
   4) Առկա դասընթացները կազմակերպել համաձայն դասացուցակի: Դասերի սկիզբը սահմանել 10.00-ին: Դասերի տևողությունը սահմանել 60 րոպե:
   5) Հեռավար դասընթացներն անցկացնել բացառապես https://e-learning.ysu.am/ հարթակում: Հեռավար դասընթացները կազմակերպել համաձայն դասացուցակի՝ երկուշաբթիից-ուրբաթ օրերին: Դասերի սկիզբը սահմանել 9.30-ին: Դասերի տևողությունը սահմանել 80 րոպե՝ 5 րոպե դասամիջոցով:
   6) Յուրաքանչյուր ուսանողի համար առկա դասաժամերը կարող են կազմակերպվել շաբաթական առավելագույնը երկու օր, օրական առավելագույնը 3 ժամ, իսկ մեկ լսարանում ուսանողների թիվը չպետք է գերազանցի 30-ը: Առկա և հեռավար ձևերով դասերի անցկացման օրերը չպետք է համընկնեն:
   7) Մեկ ուսումնական մասնաշենքում միաժամանակ գտնվող ուսանողների թիվը չպետք է գերազանցի 150-ը:

2. Սույն հրամանի մասին սահմանված կարգով տեղեկացնել ԵՊՀ աշխատողներին և ուսանողներին:
3. Սույն հրամանը ուժի մեջ է մտնում 2020 թ. սեպտեմբերի 1-ից:

Ռեկտորի ժ/պ Գ. Գ. Գևորգյան